ՖՐԱՆՍՈՒԱ-ՔՍԱՎԻԵ ԳԱՌՆՈՆ ԵՎ ՖՐԱՆՍԱԼԵԶՈՒ ԿԱՆԱԴԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԵՊԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԱՅՎԱԶՅԱՆ Հ.Ա.

XIX դարը ֆրանսալեզու կանադացիների, նրանց լեզվի, կրոնի և ազգային դաստիարակության խնդիրների համար խորհրդարանական պայքարի և ազգային ազատագրական շարժման դարաշրջան էր: Ֆրանսիական Կանադան (որը 1763թ. դարձավ անգլիական գաղութ) գտնվում էր բրիտանական կառավարության կողմից տարվող «ապաֆրանսիականացման» քաղաքականության դեմ պայքարի ոլորտում: XIX դարի անգլիական լիբերալ մտածողության միապետը՝ Դյուրամը, 1839 թ. իր հայտնի զեկույցում առաջարկել է ֆրանսիական և անգլիական խմբավորումների թշնամությանը վերջ դնելու համար ֆրանսալեզու կանադացիներին աստիճանաբար «խառնել» անգլալեզուների հետ: Այս գործընթացն արագացնելու համար Դյուրամն առաջարկել է միացնել երկու Կանադաները, իսկ անգլիացիներին՝ զանգվածային ներգաղթման քաղաքականություն վարել: Ֆրանսալեզու կանադացիների համար շատ վիրավորական հնչեց լորդ Դարեմի այն հայտարարությունը, թե իբր ֆրանսալեզու կանադական ժողովուրդն ապագա չունի, քանի որ չունի ոչ սեփական պատմություն, ոչ էլ սեփական գրականություն: Նույնիսկ XIX դարի ֆրանսալեզու կանադացի գրող Ժոզեֆ Ռուտրը, որն առանձնապես աչքի չի ընկել իր ստեղծագործություններով, նշել է. «Մենք ի՞նչ գիտենք Կանադայի պատմության մասին, այն պահից ի վեր, ինչ անգլիական տիրապետությունն է իշխում մեր երկրում ...»[1]:

Ֆրանսալեզու կանադացիները միշտ ընդդիմացել են բրիտանական քաղաքականությանը, սակայն նրանց ըմբոստացումները երբեք այնքան ուժգին չեն եղել, որքան 1837թ. ապստամբության ժամանակ, որի նպատակն էր ոտքի կանգնեցնել «պատմություն և գրականություն չունեցող ժողովրդին»: Այդ ապստամբությունն անարդյունք եղավ, և կանադացիները կղերական վերնախավի աջակցությամբ փորձեցին ստեղծել սեփական գրականությունը, որի օգնությամբ էլ պետք է վերականգնեին և հավերժացնեին իրենց պատմությունը:

Ազգային գրականության հիմքերը դնելու հայրենասիրական ձգտումներն արտահայտվում էին պատմավեպի ստեղծման փորձերի մեջ: Այստեղ ազատամտության և արմատականացման գծերով օժտված դարաշրջանի հոգևոր մթնոլորտի առանձնահատկություններն արտացոլվում են ֆրանսիացի ռոմանտիկների մանիֆեստները հիշեցնող նախաբաններում, մինչդեռ բուն վեպերը, թեև թույլ, բայց խիստ ազգային են ինչպես ոճական, այնպես էլ սյուժետային առումով: Գեղարվեստական ոճի փնտրտուքները ծավալվեցին տարբեր ուղղություններով: Նախահեղափոխական և հետհեղափոխական շրջանի ստեղծագործություններում ցայտուն երևում են Լամարտինի, Շատոբրիանի, Հյուգոյի, Վինյիի և Բերանժեի ազդեցությունները, քանի որ կանադական մտավորականության այն սերունդը, որը ձևավորվել է ֆրանսիական հուլիսյան

---

[1] *История всемирной литературы, т. VI. М.,1997, с. 584.*

հեղափոխության և վերը նշված՝ 1837թ. կանադական ապստամբության միջև ընկած ժամանակաշրջանում, ապրեց ոչ միայն նախահեղափոխական խանդավառություն, այլ նաև դառը կսկածներ՝ իր ազգապահպանության համար: Ֆրանսալեզու կանադական հեղինակները, գրականության միջոցով փորձեցին պաշտպանել իրենց ազգի գոյության իրավունքները: Նրանց ստեղծագործություններում կոնկրետության բացակայությունն ու պոետիկ անկատարությունը փոխհատուցվում էին քաղաքացիական պաթոսով: Այստեղ սգում էին հայրենիքի դժբախտությունները, գովերգում ազատությունը, հաստատում ժողովրդի ինքնավար իրավունքները, հնչեցնում Անգլիայի տիրապետության դեմ պայքարի կոչեր:

Ֆրանսալեզու կանադական գրականության հիմնադիրն է Ֆրանսուա-Քսավիե Գառնոն, որի ստեղծագործությունը սերտ կապված է թե գրականության և թե պատմության հետ, քանի որ նա առաջինը կարողացավ գրականության միջոցով ներկայացնել իր ժողովրդի պատմության բեկումնային պահերը:

Ժամանակակից Կանադայում Գառնոյի կյանքի և ստեղծագործության մի շարք մշուշոտ կողմեր դեռ լուսաբանված չեն: Առաջին ֆրանսալեզու կանադացի պատմաբան-գրողի ստեղծագործությունները հնարավոր չէ գտնել գրախանութներում, իսկ նրա նամակագրության մեծ մասը մինչ օրս տպագրված չէ:

Կանադացի պոետ, պատմաբան, վիպասան և հուշագիր Ֆրանսուա-Քսավիե Գառնոն ծնվել է Քվեբեկում (1809-1866թթ.): Նրա նախնիները Ֆրանսիայից Քվեբեկ են եկել 1656 թ.: Հայրը հազիվ է կարողացել հոգալ ընտանիքի հոգսերը, այդ պատճառով երիտասարդ Ֆրանսուա- Քսավիեի կրթությունը բավականին ընդհատումներով էր ընթացել: Սկզբում նա հաճախել է ծայրամասային մի դպրոց, իսկ 1821թ. հուլիսին գրանցվել Քվեբեկի սեմինարիայում, բայց ընտանիքի ֆինանսական վատ վիճակը նրան ստիպել է հրաժարվել դասական կրթությունից: Որոշելով նոտար դառնալ՝ նա ընդունվում է մի շոտլանդացու՝ Արչիբալդ Քեմփբելլի մոտ սովորելու: Վերջինս բանասիրության և արվեստի հայտնի հովանավոր էր, Քվեբեկի Գրական և պատմական հասարակության անդամ, հումանիստ, հսկայական գրադարանի տեր: Նոտարական գործն ուսումնասիրելու հետ մեկտեղ, Գառնոն զբաղվում է ինքնակրթությամբ: Նոտարի գրագիրը ներշնչվել էր ռոմանտիկ պատմաբանների ստեղծագործություններով: Նա ջանասիրությամբ կարդում էր պոեզիա, պատմական ստեղծագործություններ, թերթեր, ամսագրեր և բառարաններ:

1828 թ. օգոստոս-սեպտեմբերին Գառնոն ճանապարհորդություն է կատարում ԱՄՆ: Կանադական գրող Պիեր Պտիկլեռին 5 տարի նոտարական ծառայություններ մատուցելուց հետո, 1830թ. հունիսի 21-ին, նա վերջապես ստանում է նոտարի որակավորում:

Այդ տարիներին Գառնոն սկսում է բանաստեղծություններ գրել: «Գավաթը» վերնագրով և նապոլեոնյան ոգով տոգորված առաջին բանաստեղծությունը գրվել է 1830թ. հուլիսին: Նույն թվականին Գառնոն գրում է նաև դիֆիրամբներ: Իր երկրի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ Գառնոյի հայրենասիրությունը երևում է դեռ վաղ շրջանի նրա բանաստեղծություններում, որտեղ նա ցավում է, որ իր ժողովուրդը չունի այնպիսի զավակներ, որոնք անմահացնեին նրա հերոսական պատմությունը.

Ժողովուրդ, գեթ մի անուն չի հառնել քո մոխիրներից,
Ոչ մի՛ քո հուշերն ու քո երգերը պահպանելու համար ...[2] :

Նա գուցե գեռ չէր գիտակցում, որ հենց իրեն է վիճակված դառնալ այդ «անունը», որն իր հայրենակիցներին կոչ էր անելու «ազատության խստաշունչ դրոշի ներքո մահանալ հայրենիքի համար»[3] :

Գառնոյի ստեղծագործություններում իշխող թեմաներն են հայրենիքն ու ազատությունը, որոնք ծնում են մե՛կ թախծոտ ափսոսանք անցած հզորության համար, մե՛կ խանդավառություն, ըմբոստացման և ներշնչանքի պայթյուն: Ֆրանսալեզու կանադական ժողովրդի մասին պոետը երբեմն խոսում է ուղղակիորեն, երբեմն էլ դիմելով մյուս ազգերի ողբերգական ճակատագրին: Սայր Ֆրանսիայի պատկերը հայտնվում է ինչպես կարոտի աղբյուր և ազատության մարմնավորում:

Գառնոյի բանաստեղծություններում շատ են օգտագործվում կլասիցիստական պոետիկային բնորոշ տարրեր, որոնք ենթարկվում են նոր տրամադրությունների ազդեցությանը և կապված են պատմության ընթացքի ռոմանտիկական անբավարարվածության հետ: Այս համադրումը բացատրվում է Գառնոյի ժամանակակից ֆրանսիացի գրողների գրելաոճի ընդօրինակմամբ:

Հայրենասիրական ոգով գրված մի շարք բանաստեղծություններից հետո, գրական առումով արդեն հասունացած Գառնոն ցանկանում էր գրել իր երկրի պատմությունը: Այդ ժամանակ 20-ամյա Գառնոն արդեն հասցրել էր այցելել հայտնի ճակատամարտերի վայրերը և ճանապարհորդություն կատարել Եվրոպայում (1831թ.): Լոնդոնում 2 տարի աշխատելով որպես քարտուղար, նա 15 օր տևողությամբ երկու ճանապարհորդություն է կատարում դեպի Փարիզ՝ իր համար բացահայտելով անգլիացի և ֆրանսիացի ժողովուրդների իրական բնավորությունը: Անգլիայում Գառնոն ծանոթացավ Լոնդոնի առևտրական ոգու հետ, իսկ Փարիզում ապրեց առաջին անգամ ֆրանսիական հողի վրա ոտք դնելու երջանկությունը:

1854 թ. նա իր «*1831, 1832, 1833 թթ. Ֆրանսիայում և Անգլիայում կատարած ճանապարհորդությունները*»[4] ֆելիետոնի ոճով գործը տպագրում է «Le Courrier de Quebec» թերթում: Ճիշտ է, «Ճանապարհորդություններ» ստեղծագործությունը չի համարվում Գառնոյի գլուխգործոցը, սակայն այն XIX դարի ֆրանսալեզու կանադական այդ ժանրում գրված ամենահաջողված ստեղծագործությունն է. այստեղ Փարիզը և Լոնդոնը ներկայացված են որպես երկու մշակույթների դարավոր ձևավորման արդյունք:

Ծանոթությունը բրիտանական խորհրդարանական համակարգի հետ, հանդիպումներն ազդեցիկ և հայտնի մարդկանց, այցելությունները եվրոպական գրադարաններ, թանգարաններ և հուշարձաններ, կարևոր դեր խաղացին Գառնոյի ստեղծագործական կյանքում և նպաստեցին արվեստի և պատմության բնագավառում նրա գիտելիքների հարստացմանը:

Այս տպավորություններով և երիտասարդ ավյունով լեցուն Գառնոն այրվում

---

[2] Peuple, pas un seul nom n'a surgi de ta cendre,
Pas un pour conserver tes souvenirs, tes chants
(Mailhot L., Litterature canadienne-française, Montreal,1974, p. 40).

[3] Garneau Fr.X., Histoire du Canada, Quebec, 1947, p. 17.

[4] Garneau Fr. X., Voyages en Angleterre et en France dans les annees 1831, 1832 et 1833, Quebec, 1938.

էր Նոր Ֆրանսիայի հիմնադիրների մասին զարմանահրաշ դյուցազներգություն գրելու ցանկությամբ, հատկապես Յոթնամյա պատերազմի պատմության մասին, որի ընթացքում իր հայրենակիցները քաջագործության բացառիկ օրինակներ էին դրսևորել: Գառնոյի արժանիքներից մեկն օբյեկտիվության սահմանների մեջ մնալն էր, որի համար նա օգտագործել է քվեբեկյան և ֆրանսիական արխիվներում ձեռք բերած հազվագյուտ փաստագրությունը:

Գառնոն շատ է հետաքրքրվել Քվեբեկի քաղաքական և մշակութային կյանքով: Նա հիմնել է 2 թերթ. „L'abeille canadienne" («Կանադական մեղու») և „L' institut ou journal des etudiants" («Ինստիտուտ կամ ուսանողների օրագիր»), որոնք կարճ կյանք են ունեցել:

1831-1841թթ. Գառնոն գրում է մոտ 30 բանաստեղծություններ, որոնցում վառ երևում է նրա ազգային ռոմանտիկական զգացողությունը: Հայրենասիրական վերելքի դարաշրջանը Գառնոյին ստիպում է մտորել ֆրանսալեզու կանադացիների անցյալի և ապագայի մասին: Նա սկսում է գիտակցել պատմաբանի իր կոչումը: Սկսած 1837թ. փետրվարից, Գառնոն պարբերաբար պատմական գրառումներ է տպագրում «Le Canadien» թերթում և 1840թ. որոշում է գրել իր երկրի պատմությունը: Չնայած վատառողջությանը (նա տառապում էր ընկնավորությամբ) և սուղ միջոցներին, 1845թ. լույս է տեսնում նրա «Կանադայի պատմություն»(Histoire du Canada) աշխատության առաջին հատորը, որտեղ նա շարադրում է Նոր Ֆրանսիայի պատմությունը ակունքներից մինչև 1701թ.: Այս հատորը սկսվում է 1534թ. Ժակ Կարտիյեի առաջին արշավախմբի, տեղաբնակ հնդկացիների, Մոնտ Ռոյալի (Ներկայիս Մոնրեալ) առաջին բնակիչների հաստատման նկարագրությամբ: Գառնոն սրտի ցավով նշում է, որ Ֆրանցիսկ I-ի հետնորդները ամենևին չեն հետաքրքրվել ամերիկյան հողի վրա իրենց գաղութով և միայն 60 տարի անց, Հենրի IV-ն է Կանադայի ֆրանսիական գաղութն անվանել Նոր Ֆրանսիա և այնտեղ ուղարկել Սամյուել դը Շամպլենին, որն էլ դարձել է Նոր Ֆրանսիայի հիմնադիրը: Գառնոն նկարագրում է այն բոլոր պատերազմները (1628թ. կանադական հողում ֆրանսիացիների և անգլիացիների միջև ծագած առաջին պատերազմը, 1642 թ. սկիզբ առած իրոկեզների 25-ամյա պատերազմը), որոնք կործանարար ազդեցություն ունեցան Նոր Ֆրանսիայի բարգավաճման վրա:

«Կանադայի պատմությունը» աշխատության հետագայում հրատարակված երկու հատորները շարունակում են Քվեբեկի պատմությունը ընդհուպ մինչև 1792թ.: Ֆրանսալեզու կանադացիների համար ողբերգական և կործանարար դարձավ այդ դարաշրջանը, որի ժամանակ անգլիացիների կողմից սատարված իրոկեզները ավերում էին ֆրանսիացիների կողմից մոռացության մատնված Նոր Ֆրանսիան: Նկատվում են Գառնոյի ծանր հոգեկան ապրումները Ֆրանսիայի դավաճանությունը նկարագրելիս (1713թ. Լյուդովիկոս XIV-ի ստորագրած Ուտրեխտի պայմանագրով, իսկ այնուհետև 1762թ. և 1778թ. պայմանագրերով Ֆրանսիան Անգլիային էր հանձնում այն ամենը, ինչ ֆրանսալեզու կանադացիները ձեռք էին բերել և պաշտպանել իրենց արյան գնով):

Այնուամենայնիվ, Գառնոյի «Կանադայի պատմությունը» ավարտվում է լավատեսական նոտայով, երբ Մայր Ֆրանսիայից այլևս ոչինչ չակնկալող և միայն իր սեփական ուժերի վրա հույս դնող Կանադան, իր ժողովրդի հայրենասիրության և հավատի շնորհիվ ոտքի էր կանգնում և ինքնահաստատվում արդեն որպես ինքնուրույն և նոր ազգ՝ որպես կանադացի:

Իր կյանքի այս ամենակարևոր ստեղծագործությունը Գառնոն անընդհատ ուղղել և լրացրել է: Նա մշակել է երկրի դիվանագիտական կարևորագույն փաստաթղթերը և օգտվել այն հարուստ կրկնօրինակներից, որոնք 1845թ.Լուի-Ժոզեֆ Պապինոն էր բերել երկիր, ինչպես նաև ուսումնասիրել է Քվեբեկի արքեպիսկոպոսարանի արխիվները և կառավարիչների պաշտոնական նամակագրությունները: 1859թ.լույս է տեսնում «Կանադայի պատմությունը» աշխատության վերջին, հղկված հրատարակությունը: Այդ ընթացքում Գառնոյի առողջությունը վատթարանում է, նա թոշակի է անցնում և 1866 թ. հունվարի 2-ին կնքում իր մահկանացուն:

Գառնոյի ստեղծագործությունները վկայակոչում են երկու դարաշրջան և երկու մտածողություն՝ էնցիկլոպեդիստներինը (հատկապես Վոլտերինը. Գառնոն պահպանողական էր, ավանդապաշտ և դեիստ) և ռոմանտիկներինը: Նրա գաղափարները, ոճը, գոյությունն ուսումնասիրելու յուրօրինակ ձևը գալիս են և սեփական ճանապարհորդություններից ու հանդիպումներից, և ընթերցանությունից: Իր ստեղծագործություններում նա միավորել է պատմաբանի տեսավերլուծական հայեցությունը և պատմողական գեղարվեստական ոճը:

Նրա երիտասարդությունը լցված է եղել ֆրանսիացիների՝ ամերիկյան հողում մղած պայքարի գովաբանումներով և հիշողություններով[5]:

Մանրամասն փաստարկելով իր աշխատությունը, Գառնոն հայեցակարգի առումով շրջվել է դեպի ֆրանսիական ռոմանտիկ պատմագրությունը (Գիզո, Թիերի, Միշլե): Պատմական գործընթացի մասին նրա պատկերացումները հանգում են ազգերի անտագոնիզմի գաղափարին: Գառնոն ցույց է տալիս կանադական պատմության ձևավորումը եվրոպական պատերազմների անմիջական ազդեցությամբ, որպես երկու հզորագույն ազգերի ողբերգական ընդդիմության շարունակություն:

Զգտելով վերարտադրել պատմության ոգին և վերստեղծել իրադարձությունների կոլորիտը Գառնոն պատմում է Կանադայի առաջին բնակիչների քաջության ու Անգլիայի դեմ մղած պատերազմներում կատարած սխրանքների մասին և կերտում պատմական կերպարների իրական պատկերասրահ:

Այս ստեղծագործությունը քվեբեկյան պատմություն է և քվեբեկյան հեղինակի անկեղծ, աստվածաբանական զրույց, ազգային դյուցազներգություն և կարևորը քվեբեկյան հոգին պայքարի մղող գիրք: Ներկայացված բոլոր դեպքերը վավերագրական են, հուզիչ, իրադարձությունները կենդանացված են հերոս ժողովրդի կերպարներով: Յուրաքանչյուր ճակատամարտ (պատմությունն ընդհանրապես) մի փոթորիկ է, որն իրենից հետո թողնում է ավերածություններ և ծանր հոգեկան ապրումներ: Ամերիկյան հողի վրա հիմնավորված ֆրանսալեզու կանադական ժողովրդի ճակատագիրը Գառնոն ներկայացնում է որպես բնության, թշնամի հնդկացիական ցեղերի և անգլիացիների դեմ անդադար պայքար՝ ազգի և կրոնի պահպանման ու հաստատման համար: Գառնոն ցանկանում է հպարտության, հայրենասիրության և անձնվիրության կոչերով քաջալերել պարտվածներին, սակայն իրականում, հոգու խորքում նրա զգացմունքները հոռետեսական են: Այն եզրակացությունը, որը նա անում է, կատարելապես համընկնում է այն անզորության և հուսալքության դարաշրջանին, որը հետևում է 1837թ.:

[5] Garneau F. X., Voyage en Angleterre et en France dans les annees 1831, 1832, et 1833, Quebec, 1938.

«Կանադացիները չպետք է հրապուրվեն սոցիալական կամ քաղաքական նորարարություններով: Նրանք այդքան ուժեղ չեն, որպեսզի այդ ուղղությամբ գործունեություն ծավալեն: Մեծ ազգերը պետք է փորձեն նոր տեսությունները. նրանք կարող են իրենց ազատություն թույլ տալ իրենց այդքան ընդարձակ հնարավորությունների շրջանակներում: Մինչդեռ մեզ համար ամեն ինչ այլ է...»[6]: Այս զգուշավոր, պահպանողական վերաբերմունքը, որը կարծես հակասում է երիտասարդ Գառնոյի ռոմանտիկական լիբերալիզմին, անտրամաբանական չէ, առավել ևս, երբ Գառնոյի աչքի առաջ կար հնդկացիների ճակատագրի տխուր օրինակը: Ըստ Գառնոյի, եվրոպացիների կողմից նոր աշխարհի հայտնագործումն օգտակար ազդեցություն թողեց Եվրոպայի ճակատագրի վրա և կործանարար ու ողբերգական դարձավ այն ժողովուրդների համար, որոնք բնակվում էին Ամերիկայի անտառներում: Ազատության հանդեպ սիրո, ռազմաշունչ սովորությունների և անվախության շնորհիվ նրանք կարողացան առժամանակ հետաձգել իրենց անկումը: Բախվելով քաղաքակրթության հետ՝ այդ ժողովուրդներն ավելի շուտ ընկան, քան այն խորհրդավոր անտառները, որտեղ նրանք պաշտպանվում էին: Ահա թե ինչպես է այդ մասին արտահայտվել Գառնոն. «Երեք դարից էլ քիչ ժամանակ պահանջվեց, որպեսզի վայրի ցեղերը բնաջնջվեն մայրցամաքի մեծ մասի վրայից: Մենք այստեղ չենք փորձում գտնել այդ ժողովուրդների կարճ ժամանակում ոչնչանալու պատճառները, քանի որ դա մեզ շատ հեռուն կտանի և մեր առջև կբացի մարդկային հպարտության և արժանապատվության համար տխուր պատկերներ: Մենք մոռացության կմատնենք բոլոր շիրիմները, որոնց վրա որևէ հուշարձան չկա և որոնք ոչ մի հուշ չեն պահպանել...: Գրա փոխարեն մենք կշրջենք մեր հայացքները դեպի այն ժողովուրդները, որոնց արարքներն անհետ չեն կորչի և որոնց Եվրոպայից Ամերիկա բերած քաջությունն ու հանճարը նոր խթան հանդիսացան քաղաքակրթության համար»[7]:

Իր յուրօրինակ կառուցվածքով, էպիկական և ճշգրիտ ոճով, հավասարակշռված մեկնաբանություններով, պատմության խոր վերլուծությամբ և ֆրանսալեզու կանադացիների կյանքի տեսությամբ, «Կանադայի պատմությունը» արժեքավոր ստեղծագործություն է ինչպես պատմական, այնպես էլ գրական առումով:

Իր գրվածքի բարձր գեղարվեստական մակարդակը թույլ է տալիս Գառնոյին համարել XIX դարի ֆրանսկանադական բանասիրության փայլուն դեմքերից մեկը, քանի որ ֆրանսալեզու կանադական գրականության վրա նրա թողած ազդեցությունը համեմատելի է միայն արևմտաեվրոպական գրականության վրա Վ. Սքոթի թողած ազդեցության հետ: Գառնոյի ստեղծագործությունը վճռական ազդեցություն ունեցավ ոչ միայն գրականության (հատկապես պատմավեպի), այլև բուն պատմության ձևավորման և հետագա զարգացման գործում:

Գառնոն հստակեցրեց «ժողովուրդ», «ազգ», «ապրել» և «գոյատևել» բառերի նշանակությունը, կարողացավ հասկացնել, որ ժողովուրդը պետք է գոյատևի՝ ազդավայել ապրելու համար:

Որպես աշխարհիկ հեղինակ Գառնոն ցանկացել է լինել «ճշմարտության գրող»: Նա չի մտածել հոչակի մասին, այլ հստակ գիտակցել է, որ կատարում է շատ դժվարին, բայց ազգանվեր գործ: Նա երազել է ոչ թե իր, այլ իր ժողովրդի մեծության և փառքի մասին, նույնիսկ այն ժամանակ, երբ պատկերել է ֆրանսալեզու Կանադայի պարտություններն ու դառնությունները:

---

[6] Garneau Fr.-X., Histoire du Canada, p.24.

[7] Նույն տեղում, էջ 14:

Գառնոյի կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ նա կարողացավ ներկայացնել Ամերիկայում ֆրանսիական գաղութատիրության դրաման՝ որպես հունական մի ողբերգություն: Իր ստեղծագործության մեջ Գառնոն նույնիսկ Հյուսիսային Աֆրիկայում մի նոր կայսրություն ստեղծելով զբաղված Ֆրանսիային խորհուրդ է տալիս դասեր քաղել Կանադայում ունեցած անհաջողություններից և չկրկնել անփառունակ օրինակը:

Այսպիսով, Գառնոյի «Կանադայի պատմությունը» ներշնչման աղբյուր եղավ գրողների բազում սերունդների համար: Գառնոյից հետո Քվեբեկում նման մեծահռչակ ազգային պատմաբան է համարվում միայն XX դարի սկզբում ստեղծագործած Լիոնել Գրուն:

Գառնալով իր սերնդի խոսնակը, քննադատ և պատմաբան աբբա Անրի-Ռայմոն Կասգրենը իր գրական շարժումը հիմնել էր՝ վկայակոչելով Գառնոյի ստեղծագործությունը. «Մենք երբեք չենք մոռանա այն խոր ազդեցությունը, որը գործեց ուսանողի մեր երիտասարդ երևակայության վրա պարոն Գառնոյի «Կանադայի պատմությունը»: Այդ գիրքը մի իսկական զարթոնք եղավ մեզ համար...: Ինչ հազվագյուտ հպարտությամբ էինք մենք լսում այդ փայլուն դյուցազներգության տարաբնույթ երգերը»[8]:

Գառնոյի հայրենակիցները բարձր են գնահատում նրա ստեղծագործությունը, քանի որ կարդալիս վերապրում են իրենց պատմության ամենավառ դրվագները և դրամատիկ ճակատագիրը: Ժամանակակից Կանադայում գոյություն ունի «Գառնոյի ճանապարհը» շատ հայտնի արտահայտությունը, որը մի ամբողջ ժողովրդի սդո, վշտի, գոյատևման, ապագա լավագույն օրերն ապրելու ցանկության և քաջության ճանապարհն է:

ФРАНСУА-КСАВЬЕ ГАРНО И ФОРМИРОВАНИЕ ФРАНКО-КАНАДСКОГО ИСТОРИЧЕСКОГО РОМАНА

АЙВАЗЯН А.А.

Резюме

XIX век является для франко-канадцев периодом формирования нацоинально-освободительного движения, становления народа как нации, их языка и религии. В это время канадцы попытались создать национальную литературу, которая должна была восстановить и увековечить их историю.

Основоположником франко-канадской литературы является Ф.- К. Гарно, который в своей "Истории Канады" воскресил переломные моменты истории своего народа. Значение его произведения заключается в том, что став национальным эпосом, своим патриотическим духом оно будило национальное самосознание и оказало огромное влияние на формирование жанра исторического романа.

Значение "Истории Канады" остается непреходящим для современного Квебека, и по сей день вдохновляя их на борьбу за свое самоопределение.

[8] Casgrain H. R., Le mouvement littéraire au Canada, Montréal, 1986, p.355.